

ԿԱՐԾԻՔ

Մաթևոսյան Հարություն Արմենի «ՏԱԼԻԲԱՆԻ ԳՈՐԾՈՆՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ ներկայացված ատենախոսության մասին

Հրապարակային պաշտպանության ներկայացված Հարություն Մաթևոսյանի «Տալիբանի գործունը ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ» ատենախոսությունը նվիրված է ժամանակակից միջազգային հարաբերությունների և անվտանգության քաղաքականության մի կարևորագույն հարցի՝ ինչպիսին է Տալիբան շարժման գոյությունը, զարգացումը և նրա տարածաշրջանային ազդեցությունը վերջին քառորդ դարում ԱՄՆ արտաքին քաղաքականության ռազմավարական որոշումների վրա:

Ատենախոսությունը հիմնավորված, համակարգված և թեմատիկ առումով կարևոր գիտական հետազոտություն է, ուր մանրամասնորեն վերլուծվում է ԱՄՆ արտաքին քաղաքականության փոփոխությունը 1996–2021 թվականների ընթացքում՝ ուշադրություն դարձնելով Տալիբանի հետ հարաբերությունների դինամիկային, ռազմաքաղաքական մոտեցումների վերաձևակերպումներին, ինչպես նաև ներպետական քաղաքական դիսկուրսի ազդեցությանն արտաքին քաղաքական որոշումների վրա:

Հ. Մաթևոսյանի ատենախոսությունն ունի կուռ և տրամաբանական կառուցվածք, համապատասխանում է գիտական աշխատանքի պահանջներին, որի աղբյուրագիտական բազան աչքի է ընկնում լայն ընդգրկմամբ և բազմազանությամբ՝ ներառելով ինչպես դասական ակադեմիական գրականություն, այնպես էլ ժամանակակից դիվանագիտական փաստաթղթեր, գաղտնագրերով և նյութեր, ելույթներ, զեկույցներ, հարցումներ, ինչպես նաև պաշտոնական համաձայնագրերի, փաստաթղթերի և ամերիկյան մամուլի վերլուծություններ:

Ատենախոսության մեթոդաբանական շրջանակը բազմաբաղադրիչ է և ներառում է դասական և ժամանակակից մի շարք հետազոտական մոտեցումներ, որոնք հնարավորություն են տվել համակողմանիորեն վերլուծել ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Տալիբանի նկատմամբ 1996–2021 թթ. ընթացքում:

Մեթոդաբանական հիմքը ձևավորող հիմնական մոտեցումները պատմաքաղաքական, բովանդակային, համեմատական և փաստագրական

վերլուծության մեթոդներն են, որոնք ատենախոսին հնարավորություն են տվել ներկայացնել ամբողջ 25-ամյա ժամանակաշրջանի քաղաքական զարգացումները՝ փուլային և պատճառահետևանքային կապերով:

Հ. Մաթևոսյանի ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից (շուրջ 30 էջ): Ներածության մեջ հիմնավորված է թեմայի կարևորությունն ու արդիականությունը, ներկայացված են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, աղբյուրները, գիտական նորույթը:

Առաջին գլխում հեղինակը նոր դիտանկյունից է ներկայացնում ԱՄՆ-Աֆղանստան հարաբերությունների պատմա-քաղաքական էվոլյուցիան՝ ներաֆղանական ներքին բարդ կառուցվածքների, ցեղային համակարգի և տարածաշրջանային ուժային կենտրոնների մրցակցության համատեքստում: Տալիբանի ձևավորումը մեկնաբանվում է ոչ միայն իբրև կրոնական ուղղություն, այլև՝ որպես բազմաշերտ սոցիալ-քաղաքական երևույթ, որը ծնվեց աֆղանական հասարակության ճգնաժամային իրավիճակում: Այս մոտեցումը թույլ է տալիս նորովի բացատրել շարժման սոցիալական հենարանը, գաղափարական ուղենիշներն ու դրա տարածաշրջանային հովանավորների դերը:

Երկրորդ գլուխում Հ. Մաթևոսյանը ներկայացնում է ԱՄՆ քաղաքականության փուլային փոփոխությունը Տալիբանի իշխանության օրոք և դրա անկումից հետո՝ վերակառուցելով Վաշինգտոնի արտաքին քաղաքականության տրամաբանությունը ճանաչման, մեկուսացման և հետագա հակաահաբեկչական գործողությունների երեք տարբեր շրջանակներում: Այս և այլ հարցեր քննարկելու համար շրջանառության մեջ են դրվել նոր աղբյուրներ՝ ներառյալ վերջին տասնամյակում գաղտնագերծված ամերիկյան պաշտոնական փաստաթղթեր ու դիվանագիտական հաղորդագրություններ, ինչը ոչ միայն ընդլայնում է ուսումնասիրության աղբյուրագիտական բազան, այլև՝ հնարավորություն է տալիս բացահայտել քաղաքական այն սխալները, որոնք հետագայում հանգեցրին ամերիկյան ներգրավվածության արդյունավետության նվազման:

Ատենախոսության երրորդ գլխում Օբամայի վարչակազմի քաղաքականության քննությունը հիմնված է լիբերալիզմի և ռեալիզմի տեսությունների համադրման վրա՝ ցույց տալով, թե ինչպես էր ԱՄՆ ռազմավարությունը միաժամանակ գործում երկու մրցունակ շրջանակներում՝ ժողովրդավարության տարածման և անվտանգային մինիմալիզմի միջև: Իսկ չորրորդ գլխում համեմատական վերլուծությամբ ուսումնասիրվում է Դոնալդ Թրամփի և Զո Բայդենի վարչակազմերի քաղաքականությունները՝ ցույց տալով, որ ՄԱԿ-ում, տարածաշրջանային դիվանագիտության մեջ և ԱՄՆ ռազմավարական

շրջանակներում տեղի էր ունենում ոչ միայն մարտավարական, այլև՝ գաղափարական փոփոխություն:

Աշխատությունն առավել արժեք է ձեռք բերում Դոհայի գործընթացի և 2020 թ. համաձայնագրի վերլուծությամբ, ինչը նորույթ է գիտական ներկայիս դիսկուրսում, որտեղ ներկայացվում է որպես ԱՄՆ լայնածավալ ռազմավարության վերաիմաստավորում, այլ ոչ թե զուտ խաղաղության պայմանագիր՝ ընդգծելով, որ փաստացի ԱՄՆ-ի գործողությունները բխում էին նրա գլոբալ ներգրավվածության նվազեցման և ուժերի վերաբաշխման ռազմավարությունից:

Ատենախոսության կարևոր ձեռքբերումներից է նաև 2021 թ. Քարուլի անկման պատճառահետևանքային կապի բացատրումը՝ հիմնավորելով, որ անհաջողությունները պայմանավորված էին ոչ թե դուրսբերման արագությամբ, այլ կուտակված քաղաքական սխալներով, ոչ ճիշտ հաշվարկված բանակցային գործընթացով և սխալ գնահատված պետականաշինական կարողություններով:

Հստակ են ձևակերպված հեղինակի եզրակացությունները, որոնք լիովին համապատասխանում են գլոբալներում բարձրացված հիմնախնդիրներին: Հեղինակի կողմից հրատարակված 9 գիտական հոդվածներում արտացոլված են թեկնածուական ատենախոսության հիմնադրույթները: Սեղմագիրը ևս արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսությունը տալիս է տեսական հիմնավորվածություն և հնարավորություն ազգային և միջազգային չափումներում կատարել բազմաշերտ համեմատություններ: Բացի այդ, որակական տվյալների համադրումը, ինչպես նաև նոր փաստաթղթերի ներգրավումը, ապահովում են աշխատանքի ակադեմիական արժեքը և նորություն են ներկայացնում թե՛ հայաստանյան քաղաքականագիտության և թե՛ միջազգային հարաբերությունների ուսումնասիրության ոլորտում:

Ատենախոսությունն ունի կիրառական նշանակություն, որի արդյունքները կարող են ծառայել միջազգային անվտանգության ուսումնասիրությունների, պետական ռազմավարական ծրագրավորման, տարածաշրջանային քաղաքականության գնահատման գործընթացների, ինչպես նաև բուհական ուսումնական ծրագրերի և վերլուծական կենտրոնների հետազոտական աշխատանքների համար: Միևնույն ժամանակ, այն կարող է օգտակար լինել նաև ՀՀ արտաքին քաղաքականության մշակման և բուհական և վերլուծական կենտրոնների հետազոտական գործընթացում:

Չնայած պատշաճ գիտական մակարդակին, կցանկայինք առանձնացնել մի քանի դիտարկումներ, որոնք իրականացնելու դեպքում աշխատանքը կարող է ավելի շահեկան լինել:


1. Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսության հեղինակն ավելի հանգամանորեն անդրադառնար նշված ժամանակահատվածում Աֆղանստանի հարցով ԱՄՆ-ի փոխգործակցությանը դաշնակիցների՝ Սաուդյան Արաբիայի և Պակիստանի հետ, որոնք սպասարկել են տարածաշրջանում ԱՄՆ հետաքրքրություններն ու շահերը նշված ուղղությամբ: Մյուս կողմից, ցանկալի կլիներ որոշ չափով անդրադառնալ նաև տարածաշրջանում իրանական գործոնի ներազդեցությանը, հատկապես Իրան-Տալիբան հակասական հարաբերություններին, ինչը կարելի է ասել պատմական տարբեր շրջափուլերում ուղղակի կամ անուղղակի ներազդել են ԱՄՆ քաղաքականության վրա: Օրինակ 1990-ականներին Իրանը ԱՄՆ-ի պես աջակցում էր Հյուսիսային դաշինքին և թշնամական էր տրամադրված Տալիբանի նկատմամբ, որը շահեկան էր նաև ԱՄՆ-ին: Կամ 2000-ականների ընթացքում Իրանը աջակցում էր աֆղանական իշխանություններին, որոնց հետ ծավալուն փոխգործակցության մեջ էր նաև ԱՄՆ-ը: Սակայն, 2010-ականներից սկսած Իրանը տարբեր ձևերով սկսեց աջակցել Տալիբանի ազդեցիկ գործիչներին՝ դրանով խախտելով հավասարակշռությունը: ԱՄՆ-ը սկսեց Իրանը դիտարկվել որպես Աֆղանստանում «խափանող դերակատար»:
2. Լավ կլիներ, որպեսզի ատենախոսության մեջ արտացոլվեր նաև 1990-կանների երկրորդ կեսին ամերիկյան էներգետիկ ընկերությունների՝ Աֆղանստանով անցնող նախագծերի առաջ քաշման ծրագրերը՝ ԱՄՆ-ի ոչ պաշտոնական, լուռ քաղաքական աջակցության ներքո: Աֆղանստանում խողովակաշարերի կառուցումը կընդլայներ Կենտրոնական Ասիայի հսկայական էներգետիկ պաշարների միջազգային հասանելիությունը: Նման նախագիծը կարող էր արագացնել Աֆղանստանի վերակառուցումը ևս: Ի վերջո բնական գազով հարուստ Թուրքմենստանը 1997 թվականին նավթային ընկերությունների հետ կոնսորցիում ստեղծեց՝ ամերիկյան Unocal-ի գլխավորությամբ, տրանսաֆղանական խողովակաշարը կառուցելու համար: 1.9 միլիարդ դոլար արժողությամբ նախագիծը խոչընդոտների հանդիպեց գրեթե հայտարարության պահից: Հիմնական խոչընդոտը Տալիբանի կողմից Աֆղանստանի տարածքի մեծ մասի նկատմամբ վերահսկողությունն էր և շարունակվող քաղաքացիական պատերազմը: 1998 թվականին շինարարական ծրագրերը ձախողվեցին, երբ Unocal-ը դուրս եկավ կոնսորցիումից:
3. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսության հեղինակն ավելի հանգամանորեն անդրադառնար նաև Աֆղանստանի ներսում կոռուպցիայի, էլիտաների մրցակցության և պատերազմական իրավիճակում թուլացած տնտեսության

հետևանքներին, որոնք փաստացիորեն իրենց հերթին նպաստեցին Աֆղանստանում խաղաղության ներդրման հնարավորությանը:

4. Չնայած հեղինակն անդրադարձել է ԱՄՆ-Տալիբան Դոհայի խաղաղության համաձայնագրի պատճառներին, սակայն հիմնականում քննարկվում են քաղաքական մոտիվները, նյութական ծախսերը կրճատելու և ռազմական մատարակարումները սահմանափակելու պատճառները: Բացի այդ, ցանկալի կլիներ քննարման թեմա դարձնել այն հարցը, թե արդյո՞ք ԱՄՆ-ում չի դիտարկվել ասենք տնտեսական օգուտներ ստանալու հնարավորությունը Տալիբանի հետ խաղաղության հաստատումից հետո, կամ արդյո՞ք չի հաշվարկվել ռեզիոնում Չինաստանի կամ այլ տարածաշրջանային դերակատարների՝ ստեղծված բացը լրացնելու հանգամանքը, որոնք հետագայում կարող էր գործել ԱՄՆ-ի շահերի դեմ:

Այնուամենայնիվ, մեր կողմից վերոնշյալ դիտողություններն ու նկատառումները ամենևին ստվեր չեն գցում Հարություն Արմենի Մաթևոսյանի աշխատության ընդհանուր բարձր որակի վրա: ատենախոսությունը լիովին բավարարում է ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն անվերապահորեն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Արշակ Պողոսի Փոլադյան
Թունիսում, Մարոկկոյում և Մավրիտանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



հաստատում եմ՝

ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի ստորագրության իսկությունը

Դեսպանի օգնական
Արփի Ավետիսյան



18.11.2025թ.